ÐÐ ê²ÐØ²Ü² ¸ð²Î²Ü Æð² ìàôÜøÆ Î°ÜîðàÜ

ÆÙ °ðÎðÆ ÐÆØÜ²Î²Ü úð°ÜøÀ 15 î²ð°Î²Ü¾

Ð²Üð² ä°î²Î²ÜØðòàôÚÂàôØÐ²ÔÂ²Ì ²Þ²Î°ðîÜ°ðÆ
Þ²ð² ¸ðàôÂÚàôÜÜ°ðÆ ÄàÔàì²Ìàô

°ð°ì²Ü - 2010Ã.

Իմ երկրի հիմնական օրենքը 15 տարեկան է

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ
ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ - 2010թ.

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՈՒ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒ՝
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ,
ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ Սահմանադրության ընդունման 15-ամյակի հոբելյանական միջոցառումների շրջանակներում ՀՀ Նախագահի կողմից ֆեւավորած պետական հանձնաժողովի որոշմամբ Հայաստանի դպրոցներում անցկացվեց շարադրության մրցույթ՝ «Իմ երկրի Հիմնական օրենքը» թեմայով: ՀՀ գիտության եւ կրթության նախարարությունը կազմակերպեց շարադրությունների ամփոփումը: Հաղթողներ ճանաչվեցին Հայաստանի տարբեր մարզերի ու Երեւան քաղաքի թվով 16 աշակերտներ: ՀՀ սահմանադրական դատարանում կազմակերպվեց ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի կողմից սահմանված մրցանակների հանձնումը հաղթողներին: Կենտրոնի խորհրդի որոշմամբ հրատարակվում է Սահմանադրության հասակակիցների մտորումները երկրի Մայր օրենքի մասին, որոնցում գերակայողը զուլալ ու մաքուր սերն է առ հայրենիք, չխուտորված պատկերացումներն են արդարության ու ապագայի մասին, շեն ու ծաղկուն Հայաստանի վաղվա օրվա հանդեպ հավատն ու համոզվածությունն է:

Այս ժողովածուն առանց վարանելու կարելի է անվանել «Հուսալի ապագա», քանի որ ներկայացվող մտորումները, հասուն ու վստահություն ներշնչող դատողությունները, քաղաքացիական պատասխանատվությունը ներկայի ու ապագայի հանդեպ դրա լավագույն վկայությունն են:

Ռոզա ԶԱՔԱՐՅԱՆ

Երևանի թիվ 38 միջնակարգ դպրոցի
10[1] դասարանի աշակերտուհի

«Երբ մարդ անընդունակ է անձնապահպանության,
նա կյանքի իրավունք չունի»
Ռաֆֆի

Ես աշխարհ եկա այս հողի վրա, որ հայկական է: Ծնվելու պահին մանկորեն մաքուր ու մերկ էի, խղճի պես արդար ու արդարության նման գեղեցիկ: Եվ հասակ առա այս հողի վրա՝ անսալով ձայնին ու խորհուրդներին իմ ծնողների. իմ արարքների ճիշտն ու սխալը նրանք դատեցին:

Ի՜նչ լավ էր այդպես. չէ՞ որ ուղեղդ չես ծանրաբեռնում ճիշտ ու սխալով, չար ու բարիով: Բայց դա վաղուց էր և այնքան վաղուց, որ չէի կարող տարբերել անգամ «այբ»-ը «բեն»-ից:

Իսկ այսօր արդեն պարզ հասկանում եմ, որ անցան օրերն իմ մանկաժպիտ, և ես զավակն եմ ոչ միայն իմ ծնողների, այլև այս դարի, անկախ ու ազատ մեր Հայաստանի: Եվ ժամանակն է, որ հստակորեն դասդասենք արդեն՝ ինչ պիտի անենք և ինչ կարող ենք անել: Առաջին հերթին պիտի ճանաչենք մեր երկրի Հիմնական օրենքը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Անկախության հռչակումից հետո նորանկախ երկիրը կարիք ուներ նոր օրենքների: Երկրում ձեռնամուխ եղան նոր

Հիմնական օրենքի մշակմանը, որը սահմանում է երկրի քաղաքական, իրավական և տնտեսական հիմունքները: Մի երկու տարի տևեցին օրենքի մշակման աշխատանքները, և 1995 թվականի հուլիսի 5-ին Հայաստանն ուներ նոր Սահմանադրություն: Այն սահմանում է պետության հիմնական մարմինների (օրենսդիր, գործադիր, դատական) ստեղծման եղանակը, նրանց փոխհարաբերությունները, լիազորությունների շրջանակը, անհատի իրավունքներն ու պարտականությունները:

Խորապես համոզվում եմ, որ Սահմանադրության դրույթներն իմանալը, հիշողության մեջ ամրագրելը յուրաքանչյուր քաղաքացու անխաթար պարտքն է: Իսկ մենք ծուլանում ենք կատարելու մեր պարտքը: Եվ սա՞ չէ արդյոք այն լուրջ պատճառը, որ մեր երկրում հաճախ են խախտվում օրենքները. Հայաստանի քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու ազատությունները:

Իսկ ի՞նչ անել, որ իրավունքդ չոտնահարվի, և ազատությունդ չսահմանափակվի, ո՞վ պիտի պաշտպանի քեզ: Դու, միայն ու միայն դու՝ քո իրավունքների և պարտականությունների քաջ գիտակցումով: Օրենքի ուժը պիտի դարձնես քո ապրելու «զենքը»: Եվ այն պիտի այնքան ճկուն ու հմուտ օգտագործես, որ ամեն ինչ հարթ ընթանա, չլինեն ո՛չ հաղթողներ, ո՛չ պարտվողներ: Օրենքն էլ պիտի անթերի լինի, պիտի բխի միայն ու միայն մարդասիրական հայեցակետից, առաջնակարգ ու զարգացած հասարակություն կերտելու բարձր պահանջից:

Սահմանադրությունը սոսկ գեղեցիկ և հայեցի ձևակերպումներով փաստաթղթեր գրելն ու հիմք ընդունելը չէ, այլ դրանք նպատակին ծառայեցնելը: Այնինչ ամեն քայլափոխի ոտնահարվում են Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները: Ես կարծում եմ՝ այս դեպքում մեղավոր է ոչ միայն խախտողը, այլև նա, ով լռությամբ հանդուրժում է օրենքի յուրաքանչյուր խախտում:

Կոչ եմ անում մեր ժողովրդին.

- Սիրելի՛ հայեր, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, եկեք նպաստենք այն հայրենանվեր գործին, որ մեր երկրի Հիմնական օրենքը օրենք դառնա ու մնա օրենք բոլորիս համար և ծառայի ի բարօրություն ժողովրդի: Հարգենք մեկս մյուսի իրավունքները, օրենքը մեր ձեռքին չդարձնենք խաղալիք ու ծռմռենք այնպես, ինչպես մեզ է պետք, ունենանք պետական ու հանրային մտածողություն՝ դուրս գալով սեփական եսի չնչին սահմաններից: Ի՞նչ է, չե՞ք ուզում օրենքի երկրում ապրել:

- Ուզում ենք, - լսում եմ լռության ձայնը, որ բոլորի ձայնն է:

Աշոտ ՆԵՐՍԵՍՅԱՆ
Երևանի Դանիել Վարուժանի անվան թիվ 89 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ

«Մարդը հասարակական էակ է»- փաստել է Արիստոտելը: Ասել է, թե մարդը գոյատևել, լիարժեք դրսևորվել կարող է միայն հասարակության մեջ: Մարդկության սերտած ամենավաղ դասերից մեկն այն է, որ համագործակցությունը, խմբային շահերով առաջնորդվելն է հնարավորություն ստեղծում տարաբնույթ գործունեության, զարգացման, արժեքային համակարգի ստեղծման և կյանքի բարելավման համար: Հասարակության գաղափարի հետ ի հայտ է եկել նաև հասարակական իշխանություն, որի միջոցով է միայն հասարակությունը դառնում ամբողջական, կառավարելի: Հասարակական իշխանությունը տարբեր կառուցակարգ ու բովանդակություն է ունեցել պատմական տարբեր ժամանակահատվածներում և տարբեր ժողովուրդների կյանքում:

Հայ իրավական մտքի յուրօրինակ փայլատակում է Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառացը», որ ստեղծված էր երազի երկիր, ազատ, անկախ Հայաստան կերտելու համար: Հստակ մշակված սահմանումներով ամրապնդվում էր «Մարդիկ բնությունից հավասար են և պետք է առաջնորդվեն իրենց ստեղծած օրենքներով» տեսակետը:

Մարդկության պատմությունը նաև դեգերումների և որոնումների պատմություն է: Կենսափորձը ցույց տվեց, որ կառավարման տարբեր ձևերից նախընտրելին ժողովրդավարությունն է, այսինքն ժողովրդի առավելագույնս ներգ-

ռավումը կառավարման համակարգում: Ժողովրդավարության գաղափարը հայ իրականության մեջ առօրեական քաղաքականության առարկա դարձավ միայն հայոց պետականության վերածննդով՝ Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծմամբ:

Աստծո կամոք հազար ինը հարյուր իննսունհինգ թվականի հուլիսի հինգը հայոց նորանկախ պետության՝ ՀՀ Սահմանադրության ընդունման օրն է, որն իրականացել է հանրաքվեի միջոցով:

ՀՀ Սահմանադրությունը մեր երկրի Հիմնական օրենքն է, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

Այն սահմանում է մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, երկրի կառավարման կարգը:

Իբրև փաստաթուղթ այն թերևս անթերի է, քանի որ ստեղծվել է վերլուծական լուրջ աշխատանքի, այլ երկրների սահմանադրությունների հետ համեմատելու, համադրելու սկզբունքով:

Մեր երկրի Հիմնական օրենքով Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է ինքնիշխան, իրավական, սոցիալական պետություն:

Որքանով ծանոթ եմ մեր երկրի Հիմնական օրենքի դրույթներին, դրանք սահմանում են առավելագույն հնարավորը քաղաքացիական հասարակության ձևավորման համար: Այսինքն, երբ քաղաքացին ինքը ոչ միայն կառավարվող միավոր է, այլև կառավարման մասնակից: Խնդիրը այն չէ, թե որքանով է շապիկը ճաշակով և գեղեցիկ կարված, այլ այն, թե որքանով է հարմար այն մարմնին, որի համար ձևված է:

Ես իմ երկրի ու ժողովրդի դարավոր երթի անդամն եմ, սիրում եմ իմ հայրենիքը, պետությունը: Ես երազում եմ, որ ՀՀ Սահմանադրությունը ոչ միայն թղթի, այլ իրականության մեջ կատարյալ ու գործուն լինի, որ ես իմ երկրի ազատ քաղաքացին լինեմ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական, թե՛ անձնական առումներով:

Ես երազում եմ, որ իմ խոսքն էլ վճռորոշ լինի իմ պետության կառավարման համար: Ես երազում եմ, որ իմ երկրի Հիմնական օրենքի հենասյուները լինեն ընտանիքը, անհատականությունը, ազատությունը և բարոյականությունը:

Մեր երկրի Հիմնական օրենքը պետք է նպաստի սեփական քաղաքացիների լիիրավ կյանքի, լիարժեք ինքնադրսևորման համար պայմաններ ստեղծելուն:

Քաղաքացին ամեն քայլափոխի պետք է համոզվի, որ երկրում օրենքի և օրինականության գերակայություն է: Մեր պետության յուրահատկություններից մեկն էլ այն է, որ դարեր շարունակ թագ ու թագավոր, անկախություն չունեցած, բայց դրա կայացման համար արյուն ոթած ժողովրդի պետություն է, սերունդների դարավոր երազը նյութեղենացրած պետություն: Ուստի ամեն ինչից առաջ հայը և հայկականը օրենքով պաշտպանված պետք է լինի սեփական երկրում: Եթե մեր ժողովրդի դարավոր երթում ճշմարիտ, աստվածահաճո խոսքը և արդարության հաղթանակի հավատը փարոս են եղել, այսօր վտանգված են:

Ես մերժում եմ բոլոր տեսակի շերտավորումները, հասարակական սանդղահարթակների ձևավորումը, որտեղ ներքևում գտնվողների և վերևինների միջև անանց անդունդ կա:

Ես հավատում եմ, որ ապրելու եմ ինքնիշխան պետությունում: Միայն այսպես է հնարավոր դիմանալ մերօրյա հարափոփոխ կյանքի բոլոր խոչընդոտներին: Ցավոք, ցանկալին հեռու է իրականություն լինելուց: Ես երազում եմ այն օրվա մասին, երբ Սահմանադրության օրը ոչ թե սոսկ օրացուցային, այլև յուրաքանչյուր քաղաքացու տոնը լինի, որ Սահմանադրությունը ոչ միայն իրավական փաստաթուղթ, այլև հստակ և անվրեպ գործող կառուցակարգ կդառնա մեր պետության լիարժեք կայացման համար:

Լիանա ՄԱՐԻԿՅԱՆ

Լոռու մարզի Վանաձորի
Գ. Չաուշի անվան թիվ 24 միջնակարգ դպրոցի
11ա դասարանի աշակերտուհի

Արվեստում չկան օրենքներ,
կա լոկ իրավունք...
Պ. Սևակ

Իսկ կյանքու՞մ... Կյանքում կան իրավունքներ և պարտականություններ, որոնք ամրագրված են մեր Սահմանադրության՝ մեր երկրի Հիմնական օրենքի մեջ:

Երանի՜ իմ փոքրիկ Հայաստան աշխարհը դարերի հոլովույթի մեջ դառնա ոչ միայն քարերի երկիր Հայաստան, ոչ միայն լեռների երկիր Հայաստան, այլ նաև օրինաց երկիր Հայաստան:

Ես 21-րդ դարի քաղաքացին եմ, այս տարի ավարտում եմ դպրոցը, ոտք եմ դնում մեծ կյանքի շեմին և ուզում եմ, որ իմ հայրենիքն օրինապահ ու օրինապաշտ լինի, որ ես հպարտանամ իմ երկրով, իմ ունեցածով, ես արարեմ ու ստեղծեմ իմ փոքրիկ, բայց հյուրընկալ Հայաստանում:

Այո՝, այսօր առավել, քան երբևէ, արդարություն ենք ուզում, որովհետև օրենքը, արդարությունը, ամեն օրենքի հստակ իմացությունը այսօր, այս կյանքում մրցակից չունի:

Ես կուզեմ լավ իմանալ իմ երկրի օրենքները, որովհետև

Ես երազում եմ, որ յուրաքանչյուր հայորդի, որտեղ էլ որ լինի, հպարտանա ոչ միայն իր ազգային պատկանելությամբ, այլև քաղաքացիությամբ: Ես հպարտ եմ, որ հայ եմ, որ ՀՀ քաղաքացի եմ: Սա հնարավոր է միայն Հիմնական օրենքի գերակայության պայմաններում:

դա մեր հանապազօրյա արդար քունն է, մեր երազանքների և ձգտումների օվկիանն է:

Որքա՜ն կուզեմ, որ իմ երկրում յուրաքանչյուր քաղաքացի այնքա՜ն պաշտպանված լինի, որ չլինեն Սեյմ, Մեջլիս, Սպիտակ տուն, լինի միայն երկրագունդ՝ ազատ, միասնական, բռնի չբաժանված հազար մասի, և այդ երկրագնդի կապույտ անսահմանության մեջ ճախրեն սպիտակափետուր աղավնիները՝ աշխարհի վրա սփռելով ճերմակություն, անաղարտություն, մաքրություն:

Այսօր շատերն են մեկնում ԱՄՆ՝ պատճառաբանելով, որ օրենքի երկիր է, մարդիկ հարգում են օրենքները, որովհետև օրենքը պաշտպանում է նրանց:

Իսկ ո՞վ չի ուզի ապրել օրենքի երկրում, որտեղ երազներդ կարող են թևեր առնել և ճախրել անհունի մեջ, որտեղ մարդիկ լավ են զգում իրենց այնպես, ինչպես

Մեղեդին՝ վսեմ տաճարում,
Գույնը՝ հանճարեղ կտավի վրա
Եվ խաղալիքը՝ մանկան ձեռքերին:

Իմ երկրի Հիմնական օրենքը պիտի դառնա սիրելի ու հավասար բոլորի համար, այնպես, ինչպես բոլորի համար հավասար է լուսավոր այգաբացը, հավասար է բոսոր վերջալույսը, հավասար է մանրահատիկ ու շռնդալից անձրևը:

Եկեք բռունցքենք մեր կամքը, հավատը, սերը, հավատանք մեր երկրին ու մեր օրենքին, որպեսզի մեր խիղճն արդար լինի, մեր ժպիտը հավերժ պայծառ լինի, մեր հոգին սլացքի մեջ լինի, մեր երազանքները անապական լինեն:

Ես ուզում եմ... այն եմ ուզում, ինչ ամենքը...

Աստղիկ ՏԻՏԱՆՅԱՆ
Լոռու մարզի Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11$^{\underline{\text{ա}}}$ դասարանի աշակերտուհի

«Մի ժողովուրդ, որի զավակները հավասար չեն օրենքի և մահվան առջև, հաղթական հայրենիք չի ունենա»:
Գ. Նժդեհ

Քարերի մեջ ծվարած մի փոքրիկ, սրտաչափ երկիր՝ Հայաստան աշխարհ... Ազատության երազանքն աչքերում մի ժողովուրդ...

Մի ժողովուրդ, որ դարեր ի վեր սեր ու լույս է արարել, իր խղճի կանթեղով սփռել ամենուր...

Փոխարե՞նը... Փոխարենը խաչվել է բազմիցս, այրվել դավի, ցավի, ատելության խառնարանում:

Բազմիցս այրված ու հեքիաթային փյունիկ թռչունի պես մոխիրներից հառնած մի ժողովուրդ, որ դարեր շարունակ պետականություն չունենալով՝ երազել է կայուն, օրենքներով, սահմանադրական իրավունքով ամրագրված պետականություն:

Երազել է ու Խորենացու շուրթերով ողբացել իր պետականության կորուստը հինգերորդ դարում: Երազել է ու ապրել իր ստեղծած օրենքների ամրոցում:

Գուցե այդ մեծ երազանքից է ծնվել Մխիթար Գոշի «Դա-

թյան հիմնական սկզբունքը ժողովրդաիշխանությունն է: Ֆրանսիական գրականության մեծ դասական Հյուգոն իմ առջև վառում է իր մտքի կանթեղը. «Լինում են ավազակային կառավարություններ, բայց չի կարող լինել ավազակային ժողովուրդ»:

Ես ձուլված եմ քեզ, երկի՛ր իմ, ես հավատում եմ քեզ, հավատում եմ , որ դու կդառնաս մի երկիր, ուր իշխում է օրենքը:

Իմ հոգում քո սրբություններն են՝ արյան, լազուր երկնքի ու ծիրանի գույն ունեցող եռագույնդ, ազգի համար զոհվելը գերագույն երազանք համարող օրհներգդ: Եվ քո զինանշանն է իմ հոգում, որի կենտրոնում՝ վահանի վրա, մեր գերագույն սրբությունն է՝ Արարատը՝ Նոյյան տապանով: Սրաթռիչ արծիվն ու հզոր առյուծը քո հզորության խորհրդանիշներն են: Քո փառավոր անցյալի հիշողություններն են արթնացնում պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները:

Այո՝, դու եղել ես մի սրտաչափ երկիր՝ բազում հայերի սրտերի տրոփյունն առած քո մեջ: Ունեցել ես թագավորություններ, թագավորներ, որ պանծացրել են քեզ:

Ունեցել ես մեսրոպատառ գիր ու անսասան հավատ, որ զորքի փոխարեն ելել են թշնամու դեմ:

Դարերի փորձությանը դիմանալով՝ այսօր էլ մեր լեզուն ու հավատը մարտադաշտում են և աշխարհասփյուռ հայերի պահպանության վահաններն են:

Պատահական չէ, որ լեզվի պահպանման, անաղարտության, օտարաբանություններից զերծ պահելու հարցը ամրագրված է Սահմանադրությամբ: Ամրագրված է, և մենք, որ անցյալից դեպի ապագան գնացող կամրջին ենք կանգնած, իրավունք չունենք երերալու, իրավունք չունենք աղարտելու քեզ, երկի՛ր իմ, իրավունք չունենք աղարտելու քո լեզուն, հավատը, սրբություններդ:

տաստանագիրքը», որ ուղեցույց ու օրենքների գիրք է դարձել ոչ միայն մեզ, այլև ուրիշ ազգերի համար:

Հայաստա՛ն իմ, սե՛ր իմ, խի՛ղճ իմ, սիրո, կարոտի, հույսի, հավատի բուրվառ երկի՛ր իմ...

Ես՝ ազատ ու անկախ Հայաստանի քաղաքացիս, ոգորումներով թերթելով քո հիշողությունների մատյանը, թափանցելով քո՝ բազմիցս ոտնահարված իրավունքների բավիղները, ուզում եմ ասել. «Հպարտ եմ, երկի՛ր իմ, որ դու ունես ժողովրդի կողմից հանրաքվեով հաստատված Սահմանադրություն, Սահմանադրություն, որ հռչակում է Հայաստանի Հանրապետությունը որպես ժողովրդավարական պետություն և ամրագրում, պահպանում ու երաշխավորում է ազատ քաղաքացիական հասարակության հիմունքները»:

Հուլիսի հինգը իմ կյանքի ամենապայծառ տոներից է: Այդ օրը մեկ անգամ ևս ես զգում եմ, որ պաշտպանված եմ, պաշտպանված են իմ՝ Հայաստան երկրի մարդու ու քաղաքացու բոլոր իրավունքները: Զգում եմ նաև, որ պարտականություններ ունեմ քո առաջ, երկի՛ր իմ: Եթե քո սահմանադրական կարգը պահանջում է, որ դու ձևավորես քաղաքացիական հասարակություն ու ինձ դիտելով որպես բարձրագույն արժեք՝ պաշտպանես իմ իրավունքները, ազատությունը, պատիվն ու արժանապատվությունը, ապա ես պարտավոր եմ հարգել ու սրբորեն իրագործել քո օրենքները:

Երկի՛ր իմ, պետությու՛ն իմ, քո կողմից մարդու՝ թեկուզ աննշան չափով օտարված իրավունքներն ու ազատությունները քեզ կդարձնեն բռնատիրություն, իմ կողմից օտարված պարտականությունները կստեղծեն մի քաոսային իրավիճակ, ուր կա օրենք, չկա օրենքը կիրառող:

Ես ուզում եմ, որ անջրպետ չլինի քո և իմ միջև, երկիր իմ: Ես ժողովրդի ձայնն եմ, բայց ինձ համարում եմ իշխանության իսկական տերը, աղբյուրը: Չէ՞ որ քո Սահմանադրու-

Ծաղկի՛ր, երկի՛ր իմ՝ ի լուր աշխարհի բարձրացնելով քո մարդասիրական օրենքները: Եվ թող ես հպարտ ու ազատ ապրեմ՝ շուրթերիս քո արևահամ բառը, քո հերոսական օրհներգը, հոգուս մեջ՝ քո եռագույնի փայլն ու զինանշանի խորհուրդը...

Վահե ԶԱՐԳԱՐՅԱՆ
Լոռու մարզի Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ

Հայաստա՛ն, իմ երկիր արծվաբույն...

Հայաստա՛ն, իմ չքնա՛ղ երազ, իմ սրբասու՛րբ հայրենիք: Դու քայլել ես պատմության թատերաբեմում բազում դարեր, պայքարել ես քո ազատության, բարգավաճման ու հաղթանակների համար, ապրել ու արարել ես: Արարել ես համաշխարհային մշակութային կոթողներ, հուշարձաններ ու եկեղեցիներ, օրենքներ:

Օրենք. շատ պարզ ու հասարակ մի բառ, բայց միևնույն ժամանակ երկրի կարգ ու կանոնն ընդգրկող մի ողջ արժեհամակարգ, որը կարգավորում է մեր առօրյան, մեր վարքն ու բարքը: Ինչպես ցանկացած երկիր, այնպես էլ իմ չքնաղ հայրենիքը՝ Հայաստանը, ունի իր հիմնական ու հաստատված օրենքները: Այն սկսել են մշակել դեռևս մեր միջնադարյան մտածողները: Շարադրել են օրենքներ, կանոններ, որոնք էլ դարձել են մեր կայուն հայրենիքի հիմքերը:

Իմ երկրի Հիմնական օրենքը «Սահմանադրությունն» է, որը կարգավորում է ինչպես քաղաքական, այնպես էլ իրավական հարաբերությունները և ստեղծում մի նոր իրավական աշխարհ: Այն գրված է բոլորի համար, և մեր Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է պահպանել ու հարգել դրանք:

Հարգելով օրենքը, մեզ դրսևորելով որպես օրինապահ քաղաքացիներ՝ նպաստում ենք մեր երկրի բարգավաճմանն

ու հզորացմանը, կերտում ուրույն աշխարհայացք և դրանով իսկ պարտավորեցնում օտարին՝ հարգել մեզ ու մեր օրենքները:

Ճի՛շտ է, իմ երկիրն ունի իր հիմնական օրենքները, սակայն կան նաև բազմաթիվ չգրված ու գեղեցիկ օրենքներ, որոնք կարգավորում են մեր առօրյան, ինչպես նաև ավանդում մեր ապուպապերի սովորույթները: Այդ չգրված օրենքները՝ ավանդույթները, շատ հաճախ ավելի կարևոր նշանակություն ունեն և ընդունելի են ժողովրդի կողմից, քան Սահմանադրության մեջ ամրագրված և «եվրոպական նորմերով մշակված» կարգավորումները:

Իմ կարծիքով շատ ավելի լավ կլիներ, եթե մեր գրված ու չգրված օրենքները միավորվեին, և ստեղծվեր մի նոր օրենքների ժողովածու, որը կբավարարեր բոլորի պահանջները, կտարբերվեր մյուսներից, կունենար ազգային դեմք ու դիմագիծ, և ցանկացած մարդ, ով կծանոթանար այդ օրենքներին, անմիջապես զգար դրանց հայեցիությունը, հայկականությունը: Ժողովուրդն ասում է. «Ծառն արմատներով է ամուր»: Դա նշանակում է, որ օրենքները պետք է լինեն մեր ազգայինը, արտահայտեն հայի շունչն ու հոգին, այդ դեպքում ավելի կընդունվեն ժողովրդի կողմից:

Եկե՛ք հարգենք մեր երկրի հիմնական օրենքները, առաջնորդվենք դրանցով և աշխարհին ապացուցենք, որ մենք էլ օրինապահ ազգ ենք, հարգում ենք մեզ, մեր օրենքները, այն բանից անկախ, թե դրանք գրված են թղթի վրա կամ ընդունելի հանրության կողմից:

Մարիամ ԼՈՌԵՑՅԱՆ
Լոռու մարզի Վանաձորի թիվ 4 միջնակարգ դպրոցի 11ը դասարանի աշակերտուհի

Գիտե՞ք ով եմ ես: Ես Հայաստանն եմ: Մարմինս քար է, ողնաշարս՝ լեռներ, աչքերս՝ լճեր, շուրթերս՝ ձորեր, գետերս՝ փայլուն գոտիներ, ճամփաներս՝ երակ-զարկերակ, ժողովուրդս՝ վարպետ ու երգիչ, բանաստեղծ ու նկարիչ, ճարտարապետ ու գիտնական: Բոլորն իսկական մեծեր են, ու նրանց խորհրդանիշը քարի վրա աճած որթատունկն է, աղոթքի տունը՝ Գառնին ու Գեղարդը, Էջմիածինն ու սարավանդներին թառած վանքերն ու մատուռները:

Ես Հայաստանն եմ: Արմատներս անչափ հին են ու ամուր: Արմատներս բիբլիական են՝ սնված զավակներիս քրտինքով ու արյամբ: Իսկ գիտե՞ք որտեղ եմ գտնվում ես: Աշխարհի քարտեզի վրա մի փոքրիկ, շատ փոքրիկ տարածք կա: Տարբեր երկրներում այլ լեզուներով են անվանում այն, բայց այստեղ այդ տարածքը հայատառ անվանում ունի, որ համեմված է նրբահամ ծիրանի և ոսկեդեղին խաղողի բույրով: Ասեղնագործված է հայոց արտերի ցորենի արևագույն հասկերով և ցողված Արաքսի հայրենաբաղձ ջրերի կաթիլներով:

Հայաստան է իմ անունը, իսկ նրանք, ովքեր չեն ճանաչում ինձ, կարող են թերթել հնագույն մատյաններս, նայել սեպագրերիս հազարամյա, շրջել իմ տարածքներում, որ Աստված ստեղծել է բիբլիական Մասիսի ներքո:

Փոխվել են աշխարհի քարտեզները, և «ծովից ծով» Հայաստանից այսօր մնացել է շատ փոքր մաս, սակայն փոքր լինելը չի խանգարում, որ եռագույն դրոշի ներքո հնչի իմ ժողովրդի կենսահաստատ օրհներգը: Այդ օրհներգի յուրաքանչյուր տառն ամրագրված է Սահմանադրության 13-րդ հոդվածում, ըստ որի Հայաստանի Հանրապետության զինանշանի կենտրոնում՝ վահանի վրա, Արարատ լեռն է՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշաններով: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն: Այդ պատկերներից յուրաքանչյուրը իմ պատմության մի էջն է՝ ցողված զավակներիս արյունով: Իսկ պատմությունս պայքար է ու տառապանք, խիզախություն ու համբերություն: Իմ հողում են խաչմերուկվում դարերն ու ճակատագրերը, աղետներն ու թռիչքները, Մեծ եղեռնն ու Հայրենական պատերազմը, Արցախյան հերոսամարտն ու երկրաշարժը, բարբարոսությունն ու լուսավորությունը: Եթե ես չլինեի, թշնամին որտե՞ղ պիտի փորձեր իր սրի զորությունը ու պարտված հետ փախչեր: Եթե ես չլինեի, Հայկն ու Արամն ու՞մ համար պիտի լարեին իրենց աղեղները, Արա Գեղեցիկն ու Վարդան Մամիկոնյանն ու՞մ համար պիտի զոհվեին:

Եթե ես չլինեի, փափկասուն տիկնայք անգամ ինչու՞ պիտի դառնային նվիրյալներ...

Ես Հայաստանն եմ, ու սիրտս միշտ լեցուն է գորովներով, կարոտներով, հավատներով ու սպասումներով: Ես միշտ գրկաբաց ընդունել եմ զավակներիս, ու անմեկնելի ճակատագրիս քմահաճույքով օտար ափերում դեգերող երախտագետ որդիներս ծանր պահերին կողքիս են կանգնել՝ աղետներից ու արհավիրքներից դուրս բերելով ինձ: Երբ կարեվեր ցավերից տնքում էր մարմինս, երբ չարախինդ թշնամիներս ցնծում էին հրճվանքից, երբ անգամ լավատեսները փակել էին հույսի դռները, Ալեք Մանուկյանի, Քըրք Քրքորյանի և բազմաթիվ բարերար հայ մեծերի ջանքերով տարածվեցին ժամանակակից երթուղիներ ու պողոտաներ՝ կապելով ինձ արտաքին աշխարհի հետ, վեր խոյացան շքեղ կառույցներ ու մշակութային օջախներ՝ հաստատելով հայ ոգու կատարելությունն ու անմահությունը: Որպես հաղթանակի ու հավատի գրավական՝ այս ամենին զուգահեռ հնչեց Շառլ Ազնավուրի «Հայաստան» երգը՝ ոգեշնչելով անգամ անհույս հոռետեսներին: Էլ ինչու՞ պիտի անհանգստանամ, եթե այսպիսին են իմ զավակները՝ մեծ որդիներս:

Ես Հայաստանն եմ՝ աշխարհի ամենաբազմաչարչար, բայց և ամենաերանելի անկյուններից մեկը:

Եթե ուզում ես՝ ոտքերիդ նստի պատմության փոշին, եթե ուզում ես հինն ու նորը մեկտեղ տեսնել, ե՛կ Հայաստան: Եթե ուզում ես զգալ ծերության վեհությունը և որդիական անմնացորդ սիրո ու նվիրման շքեղությունը, ե՛կ Հայաստան: Ե՛կ ու կտեսնես, թե իմ բոլոր զավակները ինչպես են հպարտանում ինձ համար գրված օրհներգի հնչեղությամբ, որովհետև նրա միասնությամբ է ուժ առնում իմ՝ Հայաստանի Հանրապետության հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը:

Իմ՝ այսքան չարչարանքներ տեսած երկրի Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության ու դատական իշխանության գործելակերպն է ներկայացնում այդ Սահմանադրությունը: Այն ստեղծել է իմ ժողովուրդը, ստեղծել է, որ դրանով կարողանա պաշտպանել մարդուն: Սահմանադրությունը լիովին համապատասխանում է տառապանքի ճիրաններից մի կերպ ազատված իմ հայ ժողովրդի շահերին: Ես, որ հինավուրց եմ ու նոր, համոզված եմ, որ իմ զավակների միասնականության մեջ է դեպի երազած գալիքը տանող ուժը, այն զավակների, որոնք կառուցում են, գրում են ու

կարդում: Նաև քո մեջ է իմ հավատը, հույսը, սիրելի՝ աղջնակ, որ հիմա իմ մասին գրում ես այս տողերը ու որ ամեն երկուշաբթի երգում ինձ նվիրված օրհներգը:

Մեր հայրենիք ազատ, անկախ,
Որ ապրել է դարեդար,
Յուր որդիքը արդ կանչում են
Ազատ, անկախ Հայաստան...

Մերի ՄԱՐԳԱՐՅԱՆ
Լոռու մարզի Ջաջուռի միջնակարգ դպրոցի
9-րդ դասարանի աշակերտուհի

«Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»:

Ամրագրվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածով:

Նշանակում է, որ մեր երկրում ժողովուրդն է իր իշխանության ձևավորողը և տերը:

Սահմանադրությունը, ինչպես գիտենք, յուրաքանչյուր երկրի Մայր օրենքն է, այն ընդունվում է ժողովրդի կողմից միասնական հանրաքվեի միջոցով և նրանով հաստատվում է յուրաքանչյուրիս իրավունքներն ու պարտականությունները:

Դեռևս հին ժամանակներից մարդիկ կարևորել են օրենքների գերակայությունը և ճի՛շտ պահին, ճի՛շտ օգտագործելու անհրաժեշտությունը: Դրա վառ ապացույցը Մ. Գոշի «Դատաստանագիրքն» է, որն այժմ էլ չի կորցրել իր նշանակությունը՝ ոչ միայն մեր երկրում, այլև աշխարհի շատ երկրներում:

Օրենքները բազմազան են, և ամեն մեկը որոշակի խնդիր է լուծում. դրանց իմացությունը պարտադիր է բոլորիս համար, որպեսզի կարողանանք ճիշտ ապրել, մեզ պաշտպանել և կառուցել իրավական պետություն:

Ասում ենք, որ իրավական պետություն կառուցելու համար անհրաժեշտ է իմանալ օրենքները, դրանք ամբողջա-

նում են յուրաքանչյուրիս հոգու խորքում ունեցած «սահմանադրությամբ» և «օրենքներով»: Դա մեր խիղճն է, հայրենիքի և ծնողների նկատմամբ ունեցած մեր սերը, հարգանքը միմյանց նկատմամբ, հարգանքը մեր ձեռնարկած ազգանվեր գործի նկատմամբ, մեր լեզուն, մեր հավատը և միասնությունը: Այս է մեր Հիմնական «օրենքը». մեր խիղճը, մեր ազգային ոգին, մեր հողը, դառնության կսկիծը, որը բոլորում է 95-ամյա տարելիցը, սակայն դեռ երիտասարդ է մեր հոգիներում, մեր սրտերում, աչքերում եղած թախծի մշուշում:

Մեր Հիմնական օրենքը մեր միասնությունն է, մեր հայրենիքը, հայ ժողովրդի հարատևության խորհրդանիշ Մասիս լեռան սեգ ճակատի լուսապայծառ ձյան փայլն է, որը թափանցում է յուրաքանչյուր հայի հոգու խորքն ու մաքուր ու անաղարտ պահում: Մեր նախնիների արյունն է, որը թափվելով մեր բիբլիական երկրի բիբլիական հողին, նոր ծիլերի ծաղկման սնունդ է եղել: Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի յուրաքանչյուր սյունն է, անմար կրակը, որը նաև մեր հայրենասիրության կրակն է, մեր մայրերի օրորոցայինի ելևէջներն են, մեր դրոշը, մեր զինանշանը, մեր օրհներգը: Հայրենիքի և սփյուռքի միջև եղած անքակտելի կամուրջը, սփյուռքահայերի ոգու կանչը, թափվող անձրևը, երկնակամարում փայլող արևը, հաշտության գոտի ծիածանի գույները, մեր հիշողություններն ու մեր պատմությունը: Այս ամենը մեր հիմնական օրենքներն են:

Հարգե՛նք մեզ, հարգե՛նք մեր օրենքները և մեր Հիմնական օրենքը: Այդպես կկարողանանք կառուցել մեր երազած իրավական պետությունը:

Հրաչյա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Շիրակի մարզի Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ

Յուրաքանչյուր պետություն ունի իր պետական օրենքները: Մեր Հայաստանը նույնպես ունի իր օրենքները: Դրանք շատ կարևոր են: Օրենքները սյուներ են, որոնց վրա հիմնված է մեր պետությունը: Օրենքները ջահեր են, որոնք մթության ու անորոշության մեջ ցույց են տալիս մարդուն ճանապարհը, ուղղորդում նրան: Օրենքները վահան են, որը մեզ պաշտպանում է անօրինությունից: Բայց նաև օրենքները պատժում են, երբ որ խախտում ես դրանք: Բայց, ամենակարևորը, օրենքները ազատության, խաղաղության, ժողովրդավարության, արդարության հիմքերն են: Օրենքները չխախտելը շատ կարևոր է: Յուրաքանչյուր մարդ պետք է հետևի օրենքներին: Եթե չհետևեն, ապա պետությունը կկորչի քաոսի մեջ: Յուրաքանչյուր ոք ունի պարտավորություններ օրենքների առջև: Եվ եթե քաղաքացին չկատարի իր պարտավորությունները, ապա ոչ միայն կտուժի ինքը, նաև՝ ամբողջ պետությունը: Օրինակ՝ մենք մուծում ենք հարկեր և ասում ենք, թե ու՞ր են գնում փողերը: Այդ փողերով պետությունը դպրոցներ, հիվանդանոցներ, բնակելի շենքեր, գործարաններ է կառուցում, բանակ է պահում, նպաստներ, թոշակներ, օգնություններ է տալիս մարդկանց: Ահա, թե ինչու է կարևոր հարկեր վճարելը: Սակայն չպետք է չարաշահես քո պարտավորությունները և իրավունքները: Որտեղ

վերջանում են իմ պարտավորությունները, սկսվում են ուրիշի իրավունքները: Մեր օրենքները հավաքել են մի շատ լավ գրքում՝ Սահմանադրությունում: Սահմանադրությունը Հիմնական օրենքն է կամ օրենքների գիրք է, որն ունի հիմնադիր, հիմնարար բնույթ, սովորաբար ընդունվում է կամ ժողովրդի կողմից՝ հանրաքվեի միջոցով, կամ էլ ժողովրդի անունից՝ խորհրդարանի միջոցով: Սահմանադրությունը հասարակական պայմանագիր է, որն արտահայտում է ժողովրդի բարձրագույն կամքը: Դեռևս Խրիմյան Հայրիկը կարևորել է օրենքի ուժը մարդու բարեկեցիկ կյանքի ապահովման գործում և ասել է. «Օրե՛նք սիրե, ժողովու՛րդ, օրենք սիրե, Սահմանադրության երեսից մի՝ փախչիր, որ քեզ համար նոր ամրակապ մի լաստափայտ է... ապավինիր այդ օրինագիր լաստին, որ քո վերջին ապավենն է»: Սահմանադրությունը պետության Հիմնական օրենքն է, որը կոչված է իրավական կարգավորման ենթարկելու լայն շրջանակի հասարակական հարաբերությունները, որոնք շոշափում են բոլոր քաղաքացիների շահերի, երկրի տնտեսական համակարգի ներքին և արտաքին քաղաքականության ու հայրենիքի պաշտպանության հիմնահարցերը: Մեր Սահմանադրությունն ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին՝ հանրաքվեի միջոցով: Ամեն մարդ պետք է գիտենա իր իրավունքները, որպեսզի հեռու մնա խաբեությունից: Եվ հիշենք, որ օրենքները մեզ համար են ստեղծված, և մենք պարտավոր ենք պահպանել և չշրջանցել դրանք:

Աշխեն ՏԵՐՏԵՐՅԱՆ
Արմավիրի մարզի Էջմիածնի թիվ 9 միջնակարգ դպրոցի 9Բ դասարանի աշակերտուհի

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ասվում է՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց իրավունքներով և արժանապատվությամբ:

Մի պահ փորձում եմ պատկերացնել, թե ինչ կլինի, եթե մարդու իրավունքները չապահովվեին իրավական դաշտով:

Մարդն անհաշտ բախումների մեջ կգտնվի հասարակության հետ և, հակառակը, հասարակությունն առիթ կգտնի հալածելու անհատին: Հավանաբար անխուսափելի են նաև հակասությունները պետության և անհատի միջև: Որքա՞ն մարդիկ են օգտվում պետական ծառայություններից, բայց դժկամությամբ են պարտավորվում վճարումներ կատարել, ամեն կերպ փորձում են շրջանցել ինչ-որ ձևով:

Այս բոլոր հարաբերությունների կարգավորման համար մենք երախտապարտ ենք Սահմանադրությանը, որը «հեշտացնում է» մարդու, պետության և հասարակության իրավունքները: Սահմանադրությունը կարելի է համարել հասարակական պայմանագիր, որն արտահայտում է ժողովրդի բարձրագույն կամքը:

«Սահմանադրություն» բառը լատինական ծագում ունի՝ constitutio, որը նշանակում է «հիմնադրել», «սահմանել»: Առաջին անգամ սահմանադրությունն ընդունվել է ԱՄՆ-ում 1787 թ-ին: Հայ իրականության մեջ սահմանադրության առաջին նախագիծը՝ «Որոգայթ փառացը», շարադրվել է

Շահամիր Շահամիրյանի կողմից: Ըստ նրա՝ մարդիկ բնությունից հավասար են ծնվում և պետք է առաջնորդվեն իրենց իսկ ընդունած օրենքներով: Խորհրդային տարիներին ընդունվեց 3 սահմանադրություն: Դրանց հիմքում ընկած էին Խորհրդային Միության սահմանադրությունների դրույթները: Իսկ ՀՀ Սահմանադրությունն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին: Սահմանադրության նորմերը քարացած չեն. դրանք ենթակա են փոփոխությունների: Մարդը ձգտում է կատարելագործելու օրենքները, քանզի դրանք ծառայում են իր իսկ շահերին: Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, ամրագրում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները, ինչպես ազատությունները, այնպես էլ պարտականությունները:

Չնայած երկու հարյուրից ավելի տարի է անցել, այնուամենայնիվ, մարդու ազատությանը պետության կողմից սպառնացող վտանգը չի վերացել:

Իշխանության չարաշահման միտումը հատուկ է ցանկացած պետության: Պետք է հստակորեն ամրագրել՝ որտեղ է վերջանում մեկի իրավունքը, և որտեղ է սկսվում մյուսինը: Այդ կարգավորման գործում հիմնարար դեր է կատարում Սահմանադրությունը՝ որպես մարդու իրավունքների հիմնական աղբյուր:

Ըստ էության՝ Սահմանադրությունը օրենք է, որը վերահսկում է ցանկացած նորմատիվ իրավական ակտ: Եթե դրանք հակասեն Սահմանադրությանը, դրանք զրկվում են իրավաբանական ուժից:

Երբեմն տարակուսում ես՝ գործում է արդյոք ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված այս կամ այն հոդվածը:

Տուրք տալով օտարամոլությանը՝ հաճախ կարող ենք տեսնել այլատառ ցուցանակներ, ցուցապաստառներ: Հայկական հեռուստատեսությամբ ցուցադրվող կինոնկարներում և հաղորդումներում օտար լեզվով արտահայտվելը կամ

օտար բառեր գործածելը, չգիտես ինչու, դիտվում է բարձր ինտելեկտի արտահայտություն: Մտածում եմ՝ գուցե չի գործում ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը, որտեղ հստակ գրված է. «ՀՀ պետական լեզուն հայերենն է»:

Օրենքը չպետք է ծառայի գործիք անճարին պատժելու, իսկ հզորը կամ ճարպիկը կարողանա խուսանավել: Սահմանադրությունը, ինչպես արևը, պետք է հավասար նայի աշխարհին: Սահմանադրությունը պետք է ծառայի մարդկանց, և ոչ թե հակառակը:

Հաճախ որևէ օրենք կարդալիս միտքն այնքան խճողված է լինում, որ դժվար է ընկալելը, և հնարավոր են սողանցքներ: Օրենքը պետք է ձևակերպվի հստակ, միտքն արտահայտվի որոշակի: Եթե օրենքները լավն են, և պետությունը պատշաճ կերպով կատարում է Սահմանադրությունից բխող իր պարտականությունները՝ դրսևորելով կամք ու ցանկություն, ապա այդ երկրում անշուշտ կձևավորվի մարդու իրավունքի մշակույթ:

Ես երազում եմ, որ Հայաստանի Հանրապետությունը դառնա օրինապաշտ երկրներից մեկը աշխարհում, որտեղ մարդիկ հավասար լինեն օրենքի առջև, որտեղ Սահմանադրությունը մեծ խորհուրդ ունենա և հարգանք ներշնչի: Չէ՞ որ նրանից է սկսվում օրինավոր երկիրը՝ իր օրինավոր քաղաքացիներով:

Մարիա ԱԶԱՐՅԱՆ

Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցի
9 դասարանի աշակերտուհի

Ամեն մի երեխայի հետ մեզ լուր է գալիս, որ Աստված դեռ չի մոռացել մեզ: Բոլոր երեխաները ծնվում են ազատ և հավասար իրավունքներով ու արժանապատվությամբ:

Ազատ ապրելու արվեստն ընդունակ է ստեղծել հրաշքներ, բայց միևնույն ժամանակ չկա ավելի դժվար բան, քան սովորել իսկապես ազատ ապրել: Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում ու պաշտպանվում է պետության կողմից: Իսկ այդ պետությունը առաջին հերթին պետք է լինի արդար և ուժեղ, որովհետև արդարությունն առանց ուժի անօգնական է, ուժն առանց արդարության՝ բռնակալ: Քանզի ճշմարտությունն ու արդարությունը վեր են ամեն բանից, որովհետև միայն նրանցից է կախված ազգի մեծությունը: Ճշմարտության ու արդարության գլխավոր երաշխիքը Սահմանադրությունն է: Սահմանադրությունը Հիմնական օրենքն է կամ օրենքների օրենքը, որն ունի հիմնադիր, հիմնարար բնույթ, սովորաբար ընդունվում է կա՛մ ժողովրդի կողմից՝ հանրաքվեի միջոցով, կա՛մ էլ ժողովրդի անունից՝ խորհրդարանի միջոցով: Ուստի՝ Սահմանադրությունը կարելի է համարել հասարակական պայմանագիր, որն արտահայտում է ժողովրդի բարձրագույն կամքը: Դրանից ելնելով՝ օրենքների ուժը պետք է հետևի քաղաքացուն, ինչպես ստվերը՝ մարմնին:

Լինում են ավազակային կառավարություններ, բայց չի կարող լինել ավազակային ժողովուրդ: Եվ որպեսզի վերանան ավազակային կառավարությունները, յուրաքանչյուրս պետք է հետևենք օրենքներին: Չէ՞ որ բոլորս հավասար ենք օրենքի առջև: Ինչպես Խրիմյան Հայրիկն է ասել. «Օրե՛նք սիրե, ժողովու՛րդ, օրենք սիրե. Սահմանադրության երեսից մի՝ փախչիր, որ քեզ համար նոր ամրակապ մի լաստափայտ է... ապավինի այդ օրինագիր լաստին, որ քո վերջին ապավենն է»:

Խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, ծնունդից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Ես և յուրաքանչյուր այլ մարդ ունենք կյանքի իրավունք: Մեր երկրում ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Ես Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ, և Սահմանադրությունը համարում եմ իմ իրավունքը:

Ես բացի Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելուց, նաև աշակերտ եմ և ունեմ կրթության իրավունք: Կրթությունը անձի ձևավորման հիմնաքարն է, քանզի «կրթությունն ազատության ավելի լավ պահապան է, քան մեծաքանակ բանակը»: Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու, ինչպես նաև ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ ուսումնական ցանկացած հաստատությունում սովորելու իրավունք: Մեր՝ երեխաներիս համակողմանի և ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ է, որ մենք ձեռք բերենք համակարգված գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Մենք իրավունք ունենք

հաղորդակցվելու մեր ազգի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին: Մենք՝ անչափահասներս, իրավունք ունենք ինքնուրույն իրականացնել մեր հեղինակային իրավունքները, պաշտպանել և կյանքում այն իրագործել խելամտորեն: Հայրենիքի և ազգի ապագան մեր ձեռքերում է, իսկ այն լավագույն ձևով պահելու երաշխիքը հայրենասիրությունն է՝ գումարած հայրենական օրենքների իմացությունն ու մեր կողմից ճիշտ կիրառումը:

Ամալյա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Արագածոտնի մարզի Օշականի
Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի աշակերտուհի

Բնությունն ունի իր օրենքները: Այդ օրենքներին հետևում է յուրաքանչյուր ծառ ու թուփ, յուրաքանչյուր թռչուն ու միջատ: Դրանք ներդաշնակ են, ու չես էլ հասկանում ովքեր են դրանց հեղինակները: Մարդն էլ բնության մի մասնիկն է ու որպես կանոն՝ իր կյանքը կարգավորելու համար ստեղծում է օրենքներ: Ու շատ հաճախ իր սխալական բնույթի համաձայն՝ խախտում է այդ օրենքները:

Իմ երկիրը՝ Հայաստանը, հիմա քայլում է ժողովրդավարության ուղով: Ու որպեսզի դառնանք ժողովրդավարական երկիր, նախ և առաջ պետք է ունենանք անթերի ու անսխալ օրենքներ: Այդ օրենքները պիտի դառնան հիմք, որի վրա կկառուցվի հզոր և ուժեղ պետություն: Պետություն, որի հասարակությունը օրինապահ է ու այդ հասարակության յուրաքանչյուր անդամ գիտի, որ ինքը պարտավոր է լինել օրենքին հետևող, հակառակ դեպքում կպատժվի օրենքի ամբողջ խստությամբ:

Ափսո՜ս, որ ոչ բոլորս ենք ծանոթ մեր երկրի օրենքներին: Դրանք շատ են ու բազմազան, մի դեպքում անթերի ու անսխալ, մի դեպքում էլ, գուցե, որոշ թերացումներով: Կարևորը դա չէ, դա կուղղվի տարիների ընթացքում, կարևորը այդ օրենքները գործողության մեջ դրվեն: Իսկ արդյո՞ք մեր երկրի բոլոր օրենքներն են գործում, ու բոլորս ենք հետևում

դրանց: Իհարկե ո՛չ: Եթե այդպես լիներ, ապա ամեն օր ականատես չէինք լինի այդքան ավտովթարների, որոնց զոհ են գնում տասնյակ մարդիկ, չէինք լսի այդքան մարդասպանությունների ու գողությունների մասին: Իսկ ի՞նչ անել այդ դեպքում: Ուղղակի պիտի բոլորս փորձենք ուղղվել, բոլորս ձգտենք լինել օրինապահ քաղաքացի: Այդ ժամանակ մեր երկիրը կլինի հզոր և ուժեղ, իսկ մենք կապրենք հանգիստ ու գեղեցիկ կյանքով, առողջ ու բանիմաց հասարակության մեջ:

Երբ կարդում եմ մեր օրենքները, փորձում եմ լավ մտապահել: Հետո նաև տանն եմ ասում, դպրոցում՝ ընկերներիս: Բայց այդ օրենքների մեջ կա մեկը, որ ինձ համար ամենակարևորն է: Դա խոսքի ազատությունն է: Չմտածեք, որ մյուսներն ես անտեսում եմ: Ո՛չ, ուղղակի որպես անհատ, ես էլ ունեմ իմ անհատական կարծիքը: Խոսքի ազատություն… Արդյո՞ք մեր հասարակության մեջ բոլորն են խոսելիս ազատ, արդյո՞ք ազատ խոսքը ընդունվում է ու գնահատվում: Ես, որպես ապագա լրագրող, պիտի լինեմ ազատ խոսքի ջատագովը ու պիտի անեմ ամեն ինչ, որպեսզի այդ իրավունքը դառնա բոլորինը: Եթե ասեմ, թե այդ օրենքը ընդհանրապես չի գործում, սխալ կլինի: Նայում եմ հեռուստատեսություն, կարդում եմ մամուլ, օգտվում եմ համացանցից. խոսքի ազատությունը իսկապես նկատելի է: Բայց շատ հարցերում մենք նախընտրում ենք լռել ու չհայտնել մեր կարծիքը: Վախենու՞մ ենք, թե մեկ-մեկ «լռությունն ավելին է ասում» աֆորիզմը դարձնում ենք մեզ կարգախոս: Պատասխանը գիտենք յուրաքանչյուրս, բայց այս անգամ էլ շատերս կնախընտրենք լռել: Իսկ ինչու՞ չասել մեր կարծիքը, մեր դիրքորոշումը, մեր հայացքները: Հարցեր են, որ պատասխաններ չունեն կամ ավելի ճիշտ պատասխանը մեկն է՝ չկա խոսքի ազատություն: Գուցե չկան հասարակության մեջ այն անհատները, որոնք

սկիզբն ու հիմնաքարը կդնեն խոսքի ազատության, կդառնան առաջինը: Իմ սերունդը, որը բավականին համարձակ է և ունի մեծ ներուժ, գալու է հիմնաքարը դնելու և ազդարարելու սպասված սկիզբը:

Սկիզբ, որ կհուշի ժողովրդավարության ու ազատության հաղթանակի ավետիսը: Հուսով եմ, որ այդ օրը չի ուշանալու, մեր սերունդը սպասեցնել չի տա:

Ռոզա ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Արագածոտնի մարզի Օշականի Մ. Մաշտոցի անվան միջնակարգ դպրոցի 9ա դասարանի աշակերտուհի

Այսօր իմ ազատ ու անկախ երկիրն ունի իր օրենքները: Օրենքները ստեղծված են պաշտպանելու մարդկանց իրավունքները: Իմ երկրի հիմնական օրենքը ապրելու, կյանքի իրավունքն է: Կան շատ իրավունքներ, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց ապրել ապահով, անվնաս, ազատ և բարեկեցիկ կյանքով: Եվ մարդու կյանքին սպառնացող ցանկացած ոտնձգություն պատժվում է օրենքի ամբողջ խստությամբ: Իմ կարծիքով շատ կարևոր է մարդու ազատությունը: Սակայն, ցավոք սրտի, ոչ բոլոր մարդիկ ունեն ազատություն: Շատ երկրներում մարդիկ շահագործում եմ միմյանց, դարձնում իրենց «ստրուկը»: Հենց այդ պատճառով էլ յուրաքանչյուր ոք պետք է կարողանա պաշտպանել սեփական իրավունքները: Սակայն ազատությունը նույնպես ունի իր սահմանները: Քանի որ շատ դեպքերում մեկի չափից ավելի ազատությունը կարող է հանգեցնել մյուսի իրավունքների ոտնահարմանը: Հետևաբար յուրաքանչյուր մարդու ազատությունը ավարտվում է այնտեղ, որտեղ սկսվում է մյուսինը: Մարդիկ ունեն մտքի, խոսքի, իրենց կարծիքն արտահայտելու, ստեղծագործելու ազատություն և այլ շատ ու շատ իրավունքներ, որոնց իմացությունը փրկում է մարդկանց տարբեր իրավիճակներում: Այդ բոլոր օրենքները գրված են Սահմանադրության մեջ: Սակայն այս աշխարհում իդեալական ոչինչ չկա, և ոչ բոլոր դեպքերում են այդ

օրենքները գործում և լինում արդար: Իմ կարծիքով կարևոր օրենքներից մեկն այն է, որ յուրաքանչյուր մարդ ունի դավանանքի ազատություն: Ներկայումս ամենատարածված կրոններն են՝ քրիստոնեությունը և մահմեդականությունը: Նախկինում եղել են բռնություններ. մարդիկ ստիպել են միմյանց կրոնափոխ լինել: Ի ուրախություն ինձ՝ ներկայումս վերացել են այդ բռնությունները: Իմ երկրի ժողովուրդը քրիստոնյա է: Սակայն այլազգի բնակիչներն իրավունք ունեն, ապրելով Հայաստանում, դավանել իրենց կրոնը:

Իմ կարծիքով բոլոր իրավունքներն էլ շատ կարևոր են մարդկանց համար, սակայն ամենակարևոր իրավունքը ապրելու և ազատ լինելու իրավունքն է, քանի որ բնության ցանկացած էակ, լինի դա մարդ, թե՛ կենդանի, ձգտում է առաջին հերթին ապրել ազատ և բարեկեցիկ կյանքով: Եվ սա է, որ իմ կարծիքով պետք է լինի իմ երկրում հիմնական օրենք:

Վարդան ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Արարատի մարզի Ազատավանի միջնակարգ դպրոցի 11ա դասարանի աշակերտ

«Որպեսզի երկիրը կարողանա ապրել, հարկավոր է, որ իրավունքներն ապրեն»:
Միցկևիչ

Դեռևս հնագույն ժամանակներից մարդիկ գիտակցել են, որ իրենք ունեն իրավունքներ և պետություն կոչվածի նախանախատիպերը՝ ցեղի առաջնորդի կամ արքայի տեսքով, պարտավոր են հոգ տանել իրենց իրավունքների պահպանման մասին:

Մարդ էակը, իր լույսաշխարհ գալու պահից սկսած, ձեռք է բերում իրավունքներ, որոնցից ամենակարևորը ապրելու իրավունքն է: Հենց Աստված՝ իբրև առաջին օրենսդիր, մարդուն իրավունք տվեց «աճել ու բազմանալ», բայց՝ իր ստեղծած «Սահմանադրության» սահմանից դուրս չգալով:

Իրավունքի կարևորության գիտակցումը ստիպեց մարդկանց պայքարել դրա հաստատման համար: Ինչպես ասել է Զեյմեն. «Պատիվն ու իրավունքը հաստատվում են բանականությամբ և ոչ թե զենքի միջոցով»:

Իրավունքի հաստատման ճանապարհին եղան նաև խանգարողներ և խոչընդոտներ, սակայն դրանք դեմ էին մարդկային բանականությանը և ոչ մի արդյունք չունեցան:

Տարիների ընթացքում մարդը ստեղծեց շատ օրենքներ և

իրավունքներ, որոնք իրենց տեղը գտան բարձրագույն իրավական ակտի՝ Սահմանադրության մեջ:

Ինձ համար Սահմանադրությունը պետության կարգավորող ուժն է: Առաջին հերթին Սահմանադրությունը վերաբերում է մարդ անհատին և սահմանում է նրա գործողությունների չափը՝ օրենքով թույլատրված կարգով: Յուրաքանչյուր ոք սեփական կարծիքի լիակատար իրավունք ունի, սակայն մի պայմանով, որ այն «համընկնի» բոլորի կարծիքին: Ցանկացած մարդ պարտավոր է իմանալ իր իրավունքները՝ այս կյանքում ճիշտ առաջնորդվելու և հստակ որոշումներ կայացնելու համար:

Ես՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, առաջնորդվում եմ Սահմանադրությամբ և ընդունում այն որպես պետության հիմնադիր ուժ: Որպես հասուն քաղաքացի՝ ես գիտակցում եմ, որ այնուամենայնիվ, ուժի բացակայությունից իրավունքը չքանում է, իսկ որտեղ նույն այդ ուժը հայտնվում է, նա սկսում է փայլել:

Իրավունքին «օգնող» այդ ուժը հաստատ ուրիշներին կարգադրելու իրավունք իրենց վերապահողի բանեցրա՛ծը չէ: Այսինքն նրա՛նցը, որ, մեկ էլ տեսար իրենցով են անում ծովն ու օդը, օվկիանոսի սեփականատեր են իրենց հորջորջում... Դա «բռունցքի իրավունքն» է՝ կլոր քառակուսու կամ քառակուսի շրջանի /եթե կա/ չափ անհեթեթ... Ու ժողովուրդը իրավազուրկ է դառնում՝ նման «ուժեղների» ձեռքն իր իրավունքները տալով: Ժուրեր անունով մի իմաստուն էլ է ինձ համակարծիք. «Կա իմաստունի իրավունք, սակայն ուժեղի իրավունք չկա»: Ա՛յ, ուրի՜շ բան, եթե այդ ուժեղի կարծիքը համընկնի մերին...

... Վերջերս իմ կյանքում մի հիշարժան դեպք տեղի ունեցավ. հյուր էինք խորհրդարանի նախագահին: Այդ հյուրընկալությունը այնքա՛ն բան սովորեցրեց: Մոռացել էինք, որ հյուրընկալը երկրի բարձր պաշտոնյաներից մեկն է, որով-

հետև մեր նկատմամբ ցուցաբերած նրա հարգանքը ամրապնդեց ու, ինչու չէ, նորովի պարգևեց արժանապատվության գիտակցություն: Ես գիտեի, որ միայն ջուրն է, որ կարապին կարապ է դարձնում, որ առանց ջրի նա սոսկ մի սա՜գ է:

Հիմա հասկացա. ջրով այդ հստակ մեզ պարուրում են Ուսուցիչնե՛րը: Մեր նո՛ր ուսուցչի մոտից դուրս գալով՝ իմ ապագային հստակ ուրվագիծ-մարմին տվեցի: Վերջապես ես զգացի՝ օրենքի բարձրագույն ներկայացուցիչ-ուսուցչի տվածը հենց այն իրական ջուրն էր, որ ինձ մոտեցրեց իմ ապագայի ակունքների մոտ: Կեսկարապ- կեսսագ՝ ինձ վերապահված ճանապարհները, իմ Նպատակի՝, Երազանքի՝, Ապագայի՝ ակունքները լուրթ են արդեն. հաստա՛տ գիտեմ: Պարոն Աբրահամյանը այդ օրվա իր պահվածքով ինձ համար կարևորեց Բեկոնի խոսքը. «Դատավորները պիտի հիշեն, որ իրենց գործն օրենքը մեկնաբանելն է, այլ ոչ թե այն պարգևելը»:

... Հիմա ավելացել է իմ հարգանքը Սահմանադրության հանդեպ: Մեր օրենքները զգեստավորված չեն, մեր օրենքները... արդե՞ն իմ սրտով են, ու երանի՝ միշտ այդպես լինի...Միայն անօրինական մարդիկ ունեն չսիրած օրենքներ, այսինքն՝ ոչ իրենց սրտով գրված: Հիմա ես ունեմ և՛ արիություն, հետո կունենամ նաև՛ միջոցներ՝ օրենքը պաշտպանելու համար: Հիմա մարդկանց գնահատում եմ նաև օրենքը ի՛նչ չափով իմանալու կողմից և չեմ հարգում այն մարդկանց, որոնք Սահմանադրությունը բավականաչափ գիտեն միայն նրա համար, որ... օրենքների ճանկը չընկնեն: Խորհրդարանի նախագահը այն իմաստուն օրենսդիրը դարձավ ինձ համար, որի նպատակը ոչ թե օրենքների հրապարակումն է, այլ հասարակության համար նրանց պիտանելիության ուսումնասիրությունը. նաև սա էր մեր հիշարժան հանդիպման պատճառներից մեկը:

... Վաղը ես եմ լինելու օրենսդիր: Այսօր արդեն գիտեմ, որ ժամանակների փոխվելով՝ օրենքների փոփոխության հարկ է լինելու:

Թո՛ղ որ օրենքը խիստ լինի, կարևորն այն է, որ օրենքը բանեցնո՛ղը ներողամիտ լինի: Կսեղմեմ միայն արդարացի օրենքին «կողմ» կոճակը, որովհետև համոզված եմ՝ արդարացի օրենսդրության դեպքում մարդիկ կլինեն արդարացի:

Ես՝ ապագայի Սահմանադրության համեստ համահեղինակս, սկզբունքի հետևորդը կլինեմ Ֆրանկլինի. «Չափից դուրս թույլ օրենքներին ենթարկվում են հազվադեպ, չափից դուրս խիստ օրենքները հազվադեպ են ի կատար ածվում» բանաձևին աքսիոմատիկ ճշտությամբ հետևելով...

Արփինե ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղարքունիքի մարզի Սևանի Մ.Մաշտոցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցի 9ա դասարանի աշակերտուհի

Մեր երանելի նախնիները որևէ կարևոր գործ ձեռնարկելիս մտածում էին, թե փոթորկված օվկիանոս են մտնում և գործի վերջը տեսնում էին իբրև անալեկոծ ու ապահով նավահանգիստ:

Այժմ ես ոտք եմ դրել նավահանգիստ, սակայն սիրտս առավել փոթորկված է ու անհանգիստ, քան գործի սկզբին: Ի՞նչ եմ ափ հանել ես օվկիանոսյան հարստությունից: Չէ՞ որ երազում էի հասկանալ ու ցույց տալ, թե ուր են այն ալիքները, որոնց խորքերում մեր ազգային գոյի հիմքերն են, ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք սկիզբ առել, ինչպե՞ս ենք անցել մեր ճանապարհը, ի՞նչն է մեզ պահել և ի՞նչն է պահելու: Եվ այս ամենը՝ մեր ազգային երկար ու ձիգ տարիների կենսագրության մեջ:

Ես ինձ այսօր համարում եմ շարքային այն բոլոր երջանիկներից, որոնք ժառանգորդն են անհուն-անեզերք մեր պետության, կփորձեմ նավարկել այդ հարստության միջով և պատմել իմ տեսածների, արկածների մասին:

Դարձյալ դիմեմ երանելի մեր նախնիների կաղապարած աղերսանքին. «Ի՞նչն է մեզ պահել այսքան ժամանակ»: Սրա պատասխանը միակն է՝ օրենք, մշակույթ, իրավունք և վերջապես պարտականություն: Այս ամենն ամբողջանում է մեկ բառի մեջ՝ Սահմանադրություն:

Այո՛, Սահմանադրություն նշանակում է «հիմնադրել» սահմաններ: Այն առաջին անգամ ընդունվեց ԱՄՆ-ում հազար յոթ հարյուր ութսունյոթ թվականին: Հենց այդ ժամանակ մարդկությունը հնարավորություն ունեցավ ամբողջ ծավալով իրավական կարգավորման ենթարկել մարդու բնական իրավունքները և ազատությունները, իրավաբանորեն ամրագրել մարդկանց իրավահավասարությունը: Այդ սահմանադրությունները անհրաժեշտ էին ոչ միայն մարդու իրավունքներն ու ազատություններն ամրագրելու, այլև պետական իշխանությունը սահմանափակելու համար: Յուրաքանչյուր պետություն ունի Սահմանադրության կարիք, որպեսզի նրա միջոցով հնարավոր լինի զատել «կապանքներից» ազատվել ձգտող իշխանությանը:

Հպարտ ենք: Դեռ տասներկուերորդ դարի վերջն էր, երբ Մխիթար Գոշը կատարեց իր առաջընթաց քայլը. նա գրեց «Գիրք դատաստանի» հռչակավոր աշխատությունը, որն իր մեջ ընդգրկում էր կյանքի բոլոր բնագավառները: Նա փոքրիկ «մանուկն» էր մեր հպարտ հայ ազգի:

Հպարտ ենք: Ծնվեց Հայաստանի երրորդ Հանրապետությունը, և բարձրաձայնեցինք. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»: Ժամանակակից ժողովրդավարական սահմանադրություններն ընդունված է ընտրել երկու եղանակով՝ հանրաքվեի միջոցով և խորհրդարանի կողմից:

Հպարտ ենք: Ծնվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Հազար ինը հարյուր իննսունհինգ թվականի հուլիսի հինգ, այս օրը նշանավորվեց բոլորիս սրտում: Այսօր արդեն Մայր օրենքը տասնհինգ տարեկան է: Ինչ, պատանի տարիք, ուղիղ իմ հասակակիցը: Գիտե՞ք ինչպես եմ տոնել իմ տասնհիգ ամյակը: Աչքերս փայլում էին, հյուրերս՝ շատ, իսկ ես՝ ավելի պարտավորված: Բոլորին ուրախությամբ հայտնում էի, որ Սահմանադրության հասակակիցն եմ, անձնավորել էի վերջինս ու դարձրել ինձ մտերիմ:

Իմ Հայաստա՛ն աշխարհ՝ տանջված, ճանապարհդ երկար, միտքդ աճող ամուր քո Սահմանադրությամբ: Դու ուժեղ ես: Ուժեղ այնքան, ինչքան Հայկն էր վճռական և անկոտրում: Հայաստան, հանգիստ ծաղկիր, քո թիկունքին արդեն Սահմանադրությունն է: Այն ամուր է, կայացած, զինված քեզ պահելու ու բարգավաճեցնելու անփոխարինելի սերմերով: Թերևս պետք է ավարտեմ խոսքս՝ չավարտելով, քանի որ այնքան բան կա խոսելու Սահմանադրության մասին, որ բառերն էլ միգուցե չհերիքեն: Սակայն ինչ որ է, մենք ապրում ենք արարելով ու մեր ամեն քայլը հավասարակշռված է, այլ կերպ չէր կարող լինել՝ Սահմանադրության շնորհիվ: Մենք՝ երիտասարդներս, պետք է միշտ հիշենք և կիրառենք Սահմանադրության նորմերն ու հայացքներս ձգենք դեպի մեր նախնիները, քանզի նրանց ենք մենք պարտական:

Սահմանադրությունն անմիջական կապ ունի մեր կյանքի բարեկեցության հետ, ուստի մենք պարտավոր ենք ապահովել մեր բարեկեցիկ կյանքը: Հետևաբար եկեք մեկ անգամ ևս շնորհավորենք Սահմանադրության տասնհինգ ամյակը:

Շնորհավոր տարեդարձդ, Սահմանադրություն:

Ռուզաննա ԱՎԵՏԻՍՅԱՆ
Կոտայքի մարզի Հրազդանի թիվ 14 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի

Նստած մտածում եմ. հետաքրքիր է՝ ինչ կլիներ, եթե չլինեին օրենքները, կանոնները: Որոշ մարդիկ ասում են, թե դրանք մարդկանց դնում են կաղապարների մեջ, զրկում են ազատություններից և այլն: Ես այդպես չեմ կարծում, այլ հակառակը, ինձ թվում է, որ յուրաքանչյուրիս կյանքը կարգավորող օրենքների շնորհիվ է, որ մենք տեղյակ ենք լինում ոչ միայն մեր իրավունքներին, այլև մեր դիմաց կանգնած մարդկանց իրավունքներին: Իմ իրավունքները սահմանափակվում են այնտեղ, որտեղ սկսվում են դիմացինիս իրավունքները, այսինքն՝ բացարձակ ազատություն չկա, չի կարող լինել և չպետք է լինի: Օրենքները բազմաթիվ են ու բազմատեսակ, սակայն դրանք բոլորն էլ կարևոր են ու արժեքավոր: Ինչպես ամեն տեղ, այս դաշտում ևս կան լավագույններ: Մեր երկրում լավագույն կամ, ինչպես սովորաբար ասում են, Հիմնական օրենքը Սահմանադրությունն է: Հայ ժողովուրդը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները, իրականացրեց ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը՝

ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Սահմանադրությունը դարձավ մի ուղեցույց ամեն մի հայի համար: Մենք ապրում ենք հասարակության մեջ, իսկ հասարակական կյանքի ցանկացած ոլորտում և ցանկացած մասնագիտության տեր մարդուն անհրաժեշտ են իրավական գիտելիքներ: Իսկ իրավական գիտելիքների համար սկզբնաղբյուր է հանդիսանում Սահմանադրությունը: Սահմանադրությանը ծանոթ լինելը պարտադիր է ամեն մի քաղաքացու համար: Այդ իմացությունն ինքնանպատակ չէ: Այն կոչված է մեզանից ամեն մեկի մեջ ձևավորել հոգեբանական վճռականություն՝ պայքարելու մեր իրավունքների և ազատությունների համար: Անհրաժեշտ է, որ վստահորեն ու կայուն վճռականությամբ շարժվենք առաջ: Համոզված եմ, որ համառ աշխատանքը մեզ կսովորեցնի իրավունք՝ բարու և արդարության արվեստ, որը շատ անհրաժեշտ է մեզանից յուրաքանչյուրի և մեր հայրենիքի բարգավաճման համար:

Ես շատ կցանկանայի, որ մեր հասարակության ցանկացած անձ ծանոթ լիներ մեր երկրի հիմնական օրենքին, դիտարկեր այն որպես իր պարտքը և անպայման ենթարկվեր դրան՝ իր փոքրիկ ներդրումն ունենալով հասարակական հիմնախնդիրների լուծման գործում: Երկրի օրենքը հարգելու համար պետք է երկիրդ սիրես, իսկ ես սիրում եմ իմ երկիրը, ես հարգում եմ իմ երկրի օրենքը և պատրաստ եմ ենթարկվել Հիմնական օրենքին՝ Սահմանադրությանը, որը մեզ տալիս է ճիշտ ապրելու, դաստիարակվելու, կրթվելու և հանգստի իրավունք:

Մեր Սահմանադրությունն ընդունվեց 15 տարի առաջ և մի նոր հեռանկար բացվեց մեր անկախ երկրի առաջ: